ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2014 թվականի N 31 –Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վետերանների միավորում հասարակական կազմակերպության գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2014 թվականի մարտի 10-ին ՆԴ/1476 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1.2014 թվականի մարտի 17-ից մինչև ապրիլի 25-ը կայանալիք Հայաստանի Հանրապետության տարածքային /քաղաքային/ վետերանական կազմակերպությունների հաշվետու-ընտրական կոնֆերանսը պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վետերանների խորհրդին հատկացնել 30.000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ այն փոխանցելով հայէկոնոմ բանկ 163128121718 հաշվեհամարին:

Կողմ (15)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**
Ա. Ադամյան		
Ա.Բաղրամյան		
Լ.Բարսեղյան		
Մ.Գաբոյան		
Ա.Գրիգորյան		